ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/70

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» գնանշման հարցում, բժշկական պարագաների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-21-9/36-3»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2606-2022 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/589-2022 գրության հիման վրա, 15.02.2022թ.-ին «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.02.2022թ.-ին:

15.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/70 համարի ծածկագիրը:

24.02.2022թ.-ին և 11.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 24.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2022թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 08.02.2022թ. թիվ ՊՆ/02/589-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպության միջև կնքված գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը նախարարությունը 04.02.2022թ. դրությամբ, միակողմանի մասնակի լուծել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21 - 9/36-3 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 04.02.2022թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/36» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 15.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2606-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը, 23.02.2022թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

««Մեգիէլ» ՍՊ ընկերությանը (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի դեմ առարկում ենք:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) գործողություններն իրավաչափ չեն, քանի որ չեն բխում ոլորտը կարգավորող իրավական կարգավորումներից եւ «ՀՀ ՊՆ ԳՀԱՊՁԲ-21-9/36» պայմանագրից (հետայսու՝ նաեւ Պայմանագիր), բացակայում է ընթացակարգ նախաձեռնելու համար անհրաժեշտ իրավական հիմքը:

1. Փաստեր.

1.1 Պատվիրատուի եւ Ընկերության միջեւ 22.10.2021թ կնքվել է մատակարարման թիվ ԳՀԱՊՁԲ-21 -9/36-3 պայմանագիրը, համաձայն որի Մատակարարը պարտավորվել է ի թիվս այլ ապրանքների մատակարարել 25 հատ «Քարահեռացման զամբյուղ» մինչեւ 20.11.2021 թվականը:

1.2 02.11.2021 թվականին Ընկերությունը ի թիվիս այլ ապրանքների, պահանջվող ապրանքի քանակով 25 հատ պատվեր է ներկայացրել արտադրող Teleflex ընկերությանը:

Teleflex ընկերությունը 02.11.2021 թվականին հետադարձ հավաստումով հաստատել է Ընկերության պատվերը 25 հատի վերաբերյալ, այնուհետեւ 11.11.2021 թվականին հավաստող ինվոյսով հայտնել է, որ կարող է մատակարարել 11 հատ քարահեռացման զամբյուղ:

11 հատ քարահեռացման զամբյուղը Ընկերությունը ժամանակին մատակարարել է Պատվիրատուին:

16.11.2021 թվականին Ընկերությունը Teleflex արտադրողին խնդրել է գրավոր հայտնել, արդյոք հնարավոր է 14 հատ քարահեռացման զամբյուղը մատակարարել, թեկուզ եւ 2021 թվականի դեկտեմբեր ամսին, հաշվի առնելով եւ առաջնորդվելով Պայմանագրի 8.8 կետով մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել 30 օրացուցային օրով:

16.11.2021թ Teleflex ընկերությունից գրավոր հայտնել են, որ դեկտեմբեր ամսին մատակարարել անհնար կլինի, քանի որ տվյալ ապրանքի հետ կապված կան որոշակի սահմանափակումներ:

Teleflex ընկերությունը 06.12.2021թ նամակով հայտնել է, որ նախատեսված 25 հատ քարահեռացման զամբյուղներից 11-ը չի կարող մատակարարել արտադրական ձգձգումների պատճառով, խնդրում ենք այն դիտարկել որպես ֆորս մաժորային իրավիճակ եւ չկիրառել գնման պայմանագրով նախատեսված տուգանքը մեր դիստրիբյուտորի «Մեգիէլ» ՍՊ ընկերության նկատմամբ:

09.12.2021թ Teleflex ընկերությունը կրկին նամակով հայտնել է, հետեւյալը՝ հստակեցնելով մատակարարվող ապրանքի քանակը, «Այս նամակն ուղարկվում է առ այն, որ Teleflex ընկերությունը նախատեսված 25 հատ Rusch 342700-000025 քարահեռացման զամբյուղներից 14-ը չի կարող մատակարարել արտադրական ձգձգումների պատճառով:

Ապրանքի հասանելիության ակնկալվող ժամանակահատվածը 2022թ. երկրորդ քառամսյակն է, սակայն տվյալ ինֆորմացիան կարող է փոփոխվել:»

1.3 Ելնելով վերը ներկայացված իրողությունից, որ Teleflex ընկերությունը նշված ժամանակահատվածում չի կարող արտադրել Պայմանագրով պահանջվող ապրանքը,

հետեւաբար Ընկերությունը չի կարող մատակարարում ապահովել Պայմանագրով սահմանված ժամկետում, 09 դեկտեմբերի 2021թ դիմում է ներկայացրել ՀՀ ՊՆ նախարար Ս. Պապիկյանին կամ Պայմանագրի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով կամ ֆորս մաժորի հիմքով Պայմանագիրը լուծել:

Ինչպես նաեւ հայտնել էինք, որ Teleflex ընկերությունը տեղեկացրել էր, որ Rusch 342700-000025 քարահեռացման զամբյուղ առկա չէ իր այլ պահեստներում:

1.4 21.12.2021 թվականին 19/1927 գրությամբ ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչությունը 09.12.2021թ գրությանն ի պատասխան հայտնել է, որ «...Teleflex ընկերության արտադրական հետաձգումների պատճառով 14 միավոր Rusch քարահեռացման գործիքների մատակարարման անհնարինությունը չի կարող դիտարկվել որպես «ֆորս մաժորային», քանի որ կնքված պայմանագրի 7-րդ կետի համաձայն «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:»

Հաշվի առնելով վերոգրյալը պայմանագիրը կլուծվի միակողմանի:»

1.5 ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյանը 25.01.2022թ. գրությամբ դիմել է ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ. Բրուտյանին առաջարկելով նշված գրությամբ վկայակոչված ընկերությունների հետ կնքված պայմանագրերը միակողմանի լուծել:

1.6 ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 04.02.2022թ թիվ ՊՆՏ/2-156 գրությամբ իրազեկվել ենք, որ թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 պայմանագիրը 2.1.7.1 կետի բ/ենթակետի հիմքով 04.02.2022 թվականին միակողմանի լուծվել է մասնակի:

1.7 Հ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետի կողմից գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է տրամադրվել ՀՀ ՊՆ

կողմից ներկայացված գրության պատճենը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու ընթացքը:

1.8 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 15.02.2022 թվականին նախաձեռնվել է ընթացակարգ «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. Իրավական դիրքորոշում.

2.1 ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 պայմանագիրն անհաղթահարելի ուժի հիմքով լուծելու մասով.

ՀՀ զինված ուժերի ռազմաբժշկական վարչությունը 21.12.2021 թվականի 19/1927 գրությամբ հայտնել է, որ Teleflex ընկերության արտադրական հեաաձգուսՈւերի պատճառով 14 միավոր Rusch քարահեռացման գործիքների մատակարարման անհնարինությունը չի կայուող դիտարկվել որպես «ֆորս մաժորային», քանի որ կնքված պայմանագրի 7-րդ կետի համաձայն «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, ոյշոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատայաումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:»

Մատակարարի եւ Պատվիրատուի միջեւ 22.10.2021 թվականին կնքված պայմանագրի գործողության ժամկետը եղել է 30 օրացուցային օր, հետեւաբար Պայմանագրի 7-րդ կետով վկայակոչված 3 ամսից ավելին իմաստազրկվում է եւ չի կարող իրավական հետեւանք առաջացնելու համար առաջնորդվել այդ ժամկետի հաշվարկով:

Պայմանագրով ի թիվս այլի, որպես անհաղթահարելի ուժի առկայություն նախատեսված է եւ այլն որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Պարտապանը պարտավորությունը չկատարելու եւ (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:...

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժխայսինքն տվյալ պայմաններում արտակարգ եւ անկանխելի հանգամանքների հետեւանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Այս դեպքում Teleflex ընկերության կողմից Պատվիրատուի համար անհրաժեշտ ապրանքը չարտադրելը եւ իր այլ պահստներում առկա չլինելն անհաղթահարելի ուժ է եղել Ընկերության համար, եթե 22.10.2021 թվականին կնքված պայմանագրով պահանջվող քարահեռացման զամբյուղները արտադրող ընկերությունը հայտնում է, որ չի արտադրում առկա է արտադրական խնդիր եւ իր այլ պահեստներում էլ չունի, ապա այս իրողությունն անհաղթահարելի եւ անկանխելի է եղել Ընկերության համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԷԴ/0888/02/14 գործով 2015թ որոշմամբ Օրենսգրքի 417-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ հայտնել է հետեւյալ դիրքորոշումը...

«Օրենսդիրն ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություն, որի դեպքում պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետեւանքով: Միեւնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ եւ անկանխելի, այսինքն այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի եւ դրա կատարման պայմանների շրջանակներում»:

Այս դեպքում Ընկերությունն իր պարտավորությունը պատշաճ կատարելու համար ժամանակին պատվեր է ներկայացրել, որը հիմնավորվում է փաստաթղթերով եւ նույն պայմանագրի շրջանակում պահանջված 25 քարահեռացնող զամբյուղից 11 հատը մատակարարել է, 02.11.2021 թվականին Teleflex ընկերությանը պատվեր ներկայացնելուց հետո: Այնուհետեւ, արտադրող ընկերությանը դիմել է, եթե հնարավոր է նույնիսկ 2021 թվականի դեկտեմբեր ամսին մատակաարել պահանջվող ապրանքը, ապա այն ընդունելի կլինի, որին ի պատասխան Teleflex ընկերությունը հայտնել է, որ հնարավոր արտադրությունը կլինի 2022 թվականին, իսկ պահեստավորած ապրանք առկա չէ:

Teleflex ընկերության կողմից Rusch քարահեռացման զամբյուղ գործիքը չարտադրելը 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անհաղթահարելի եւ անկանխելի հանգամանք է եղել «Մեգիէլ» ՍՊ ընկերության համար:

Նկատի ունենալով, որ պետական գնումների շրջանակում կնքված պայմանագրով եւ տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող ապրանքը այլ համարժեք ապրանքով փոխարինելը Պատվիրատուի կողմից ընդունելի չէ, որը սահմանված է նաեւ Պայմանագրով, ուստի Ընկերությունը Rusch քարահեռացման զամբյուղը այլ համարժեք ապրանքով փոխարինելու հնարավորությունից զրկված է եղել:

2.2 «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգի մասով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն .... մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը...:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի «հետայսու Կարգ» 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 45-րդ կետով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները լիազոր մարմնին տրամադրելը պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ միայն կարող ենք փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում, Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին եւ այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնի այլ չհիմնավորվող մեկնաբանության հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությունը:

Համաձայն թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 պայմանագրի 2.1.7.1 բ/ ենթակետի պայմանագիրը միակողմանի լուծվում է, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Պայմանագրով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված եղել 20 նոյեմբերի 2021 թվականը: 2.1.7.1 կետի բ/ ենթակետի համաձայն Պայմանագրի կետանցի ժամկետը լրացել է 30 նոյեմբերի 2021 թվականը, այսինքն Պատվիրատուի համար պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքն ի հայտ է եկել դեռեւս 30.11.2021 թվականին, եթե նույնիսկ Պատվիրատուն անգործություն է դրսեւորել եւ չի առաջնորդվել գործադիրի կողմից սահմանած 5 օրյա ժակետով, ապա դրա մասին պետք է, որ տեղեկանար 09.12.2021 թվականին Ընկերության կողմից ներկայացված գրությամբ, որով Ընկերությունն առաջարկել է լուծել պայմանագիրը: 09.12.2021 թվականի գրությանն ի պատասխան Պատվիրատուն 21.12.2021թ գրությամբ հայտնել է, որ Պայմանագիրը կլուծվի միակողմանի:

25.01.2022 թվակնաի գրությամբ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյանը դիմել է ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ. Բրուտյանին առաջարկելով նշված գրությամբ վկայակոչված ընկերությունների հետ կնքված պայմանագրերը միակողմանի լուծել, վկայակոչված ընկերությունների շարքում է եղել նաեւ «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը:

ՀՀ ՊՆ նախարարի տեղակալ Կ. Բրուտյանը 04.02.2022 թվականի ՊՆՏ/2-156 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 պայմանագիրը 2.1.7.1 կետի բ/ ենթակետի հիմքով լուծվել է 04.02.2022 թվականին:

Կարգի 45-րդ կետի համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Քանի որ օրենքի նշված կետով հիմքերը մեկից ավելին են, ապա սույն գործով հիմքը պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքն է, որն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն համապատասխան հիմքերը պետք է ուղարկեր լիազորված մարմնին, իսկ պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքը Պատվիատուի համար ի հայտ է եկել 30.11.2021 թվականին, այնուհետեւ 09.12.2021 թվականին, այնուհետեւ 21.12.2021 թվականին, այնուհետեւ 25.01.2022 թվականին, սակայն պայմանագիրը միակողմանի լուծված է համարվել 04.02.2022 թվականին, իսկ ընթացակարգը նախաձեռնվել է 15.02.2022 թվականին:

Սույն գործի փաստական հանգամանքերի համադրությամբ հիմնավորվում է, որ Պատվիրատուն պայմանագիրը պետք է լուծեր 7-րդ կետով անհաղթահարելի ուժի հիմքով:

Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, որպիսի պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվությունը չի կարող ծագել եւ հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Կարգի 45-րդ կետով սահմանված հիմքը ոչ թե պետք է դիտարկել պայմանգիրը լուծելու օրը, այլ լուծման համար հիմքերի ի հայտ գալու օրը, այլապես գործադիրի կողմից սահմանված ժամկետը ինքնանպատակ կլինի: Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքը, եթե ծագել է օրինակ 21.12.2021 կամ 25.01.2022 թվականին, սակայն Պատվիրատուն որոշել է պայմանագիրը լուծված համարել 04.02.2022 թվականին եւ հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկել լիազոր մարմնին, չի կարող գնահատվել, որ Պատվիրատուն ղեկավարվել է իրավական ակտով սահմանված ժամկետով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական մարմինների գործողությունները, որոնք դուրս են օրենսդրի եւ գործադիրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակից, չեն կարող իրավական հետեւանք առաջացնել իրավահարաբերության սուբյեկտի համար, մինչդեռ, այն պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ գործողության կրողի համար:

Վերլուծելով վերոգրյալ փաստերը կարգավորող նորմերի համատեքստում արձանագրում ենք, որ Պատվիրատուն չի ղեկավարվել Պայմանագրով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ Կարգի 45-րդ կետով:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Մեգիէլ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/36-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.11.2021թ.-ը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 04.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆՏ/2-156 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ.-ի 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.11.2021թ. մատակարարել 25 հատ «Քարահեռացման զամբյուղ», որից չի մատակարարել 14 հատը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.02.2022թ.-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

v. «Teleflex» արտադրող ընկերությունը Մասնակցին ուղղված 06.11.2021թ.-ի գրությամբ հայտնել է, որ դեկտեմբեր ամսին մատակարարել անհնար կլինի, քանի որ տվյալ ապրանքի հետ կապված կան որոշակի սահմանափակումներ:

vi. «Teleflex» արտադրող ընկերությունը Մասնակցին ուղղված 06.12.2021թ.-ի մեկ այլ գրությամբ հայտնել է, որ նախատեսված 25 հատ քարահեռացման զամբյուղներից 11-ը չի կարող մատակարարել արտադրական ձգձգումների պատճառով, և խնդրել է այն դիտարկել որպես ֆորս մաժորային իրավիճակ և չկիրառել գնման պայմանագրով նախատեսված տուգանքը «Մեգիէլ» ՍՊԸ-ի նկատմամբ:

vii. «Teleflex» արտադրող ընկերությունը Մասնակցին ուղղված 09.12.2021թ.-ի մեկ այլ գրությամբ հայտնել է, որ «Teleflex» ընկերությունը նախատեսված 25 հատ Rusch 342700-000025 քարահեռացման զամբյուղներից 14-ը չի կարող մատակարարել արտադրական ձգձգումների պատճառով: Ապրանքի հասանելիության ակնկալվող ժամանակահատվածը 2022թ.-ի երկրորդ քառամսյակն է, սակայն տվյալ ինֆորմացիան կարող է փոփոխվել:

viii. Մասնակիցը 09.12.2021թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ Teleflex ընկերությունը տեղեկացրել է, որ նախատեսված 25 հատ Rusch 342700-000025 քարահեռացման զամբյուղներից 14-ը չի կարող մատակարարել արտադրական ձգձգումների պատճառով և խնդրել է Պայմանագրի մատակարարման ժամկետը երկարացնել 30 օրացուցային օրով կամ ֆորս մաժորի հիմքով Պայմանագիրը լուծել:

ix. Պատվիրատուն 21.12.2021թ.-ին թիվ 19/1927 գրությամբ Մասնակցի 09.12.2021թ.-ի գրությանն ի պատասխան հայտնել է, որ Teleflex ընկերության արտադրական հետաձգումների պատճառով 14 միավոր Rusch քարահեռացման գործիքների մատակարարման անհնարինությունը չի կարող դիտարկվել որպես «ֆորս մաժորային», քանի որ կնքված պայմանագրի 7-րդ կետի համաձայն «Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Հաշվի առնելով վերոգրյալը պայմանագիրը կլուծվի միակողմանի:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2606-2022 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը

որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, բժշկական պարագաների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ բաժնի համաձայն՝

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած բժշկական պարագաներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր բժշկական պարագաներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո

ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ

հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-9/36-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.11.2021թ.-ը:

www.gnumner.am համացանցային 04.02.2022թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՊՆՏ/2-156 ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Պայմանագիրը, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեգիէլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2021թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-21-9/36-3 ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Մասնակիցը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.11.2021թ. մատակարարել 25 հատ «Քարահեռացման զամբյուղ», որից չի մատակարարել 14 հատը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, Մասնակցի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացրած նամակագրություններն ու վերջինիս դիքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարումը տեղի է ունեցել ոչ վերջինիս մեղքով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունը չկատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2606-2022 գրությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/70 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**